ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1961 Общественные науки

ԳՐԱԽՈՍԱՍԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿ

Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական պատմական արխիվը (ՊԿՊԱ) հանդիսանում է մեր ռեսպուբլիկայի գիտահետազոտական խոշոր հիմնարկներից մեկը։ Այնտեղ են պահվում հսկայական քանակությամբ դոկումենտալ նյութեր, որոնք առաջացել են 1820—1917 թթ. ցարական ինքնակալության պետական իշխանության և ղեկավարման տեղական օրգանների, տնտեսական, կուլտուր-լուսավորական, հասարակական, բարեգործական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև կրոնական պաշտամունքի մի շարք հիմնարկների գործունեության (1649—1920 թթ.) ընթացքում, ասված է ուղեցույցի առաջաբանում։ ՊԿՊԱ-ում պահվում են նաև բուրժուական ժամանակավոր կառավարության, ինչպես և Հայաստանում դաշնակների տիրապետության տարիներին առաջացած հիմնարկների ֆոնդերը (1917—1920 թթ.)։

Արխիվային դոկումենտներ ուսումնասիրողների ընտրած թեմայի շուրջը եղած նյութերում ավելի արագ կողմնորոշվելու, հետազոտողի ծանր աշխատանքը ավելի թեթևացնելու նպատակով, Պետական կենտրոնական պատմական արխիվը առաջին անգամ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին նվիրված՝ հրատարակել է բոլոր ֆոնդերի ուղեցույցը։

Ուղեցույցը կազմել են Ա. Կ. Գրիգորյանցը, Հ. Լ. Գրիգորյանը, Գ. Գ. Հարությունյանը, Գ. Մ. Նաթիրյանը, Լ. Լ. Քոչարյանը։ Ձեռնարկի գլխավոր խմբագիրն է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վ. Հ. Ռշտունին։ Ընդհանուր խմբագրություն կատարել են Վ. Գ. Կզարիմյանը, Գ. Գ. Հարությունյանը։

Ներկա ուղեցույցը հանդիսանում է 1958 թ. ռուսերեն լեզվով հրատարակված նույնանուն ձեռնարկի հայերեն թարգմանություն, որոշ լրացումներով ու փոփոխություններով։ Արխիվային ֆոնդերը ըստ իրենց բնույթի ու ժամանակի բաժանված են 11 առանձին հատվածների։ Ուղեցույցի յուրաքանչյուր ֆոնդին տրված է առանձին բնութագիր։ Շարադրված են յուրաքանչյուր հատվածի դոկումենտալ նյութերի շատ սեղմ անոտացիաները։ Ուղեցույցը ունի զիտական ապարատ.

1. Ցուցակ Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվում պահվող այն ֆոնդերի, որոնք չեն տեղադրվել ուղեցույցի հիմնական մասում։ 2. Կրճատված բառերի ցանկ։ 3. Աշխարհագրական ցանկ։ 4 Անվանացանկ։ 5. Առարկայական-թեմատիկ ցանկ։

Այդ ամենը ձեռնարկն ավելի արժեքավոր է դարձնում։ Նա գիտահետազոտական աշխատանքով զբաղվողի համար շատ օգտակար ուղեցույց է հանդիսանում։ Ուղեցույցը զերծ չէ նաև թերություններից։ Ձեռնարկի առաջաբանում գրված է.«Ուղեցույցում տրված են կարևոր ֆոնդերի բնութագրերը, անկախ նրանց պահպանման միավորների քանակից» (էջ 8)։ Մեզ թվում է, թե արխիվում չկան «ավելի կարևոր» և ոչ կարևոր ֆոնդեր, այլ գիտական այդ հիմնարկում պահվող ամեն մի ֆոնդ, ամեն մի փաստաթուղթ շատ կարևոր է և խմբագրություն պետք է կազմեր բոլոր ֆոնդերի բնութագրերը, այլ ոչ թե նրանց մի մասը համարելով «ոչ կարևոր» ֆոնդեր, նրանք տար միայն ցանկի ձևով։ Կազմողները և խմբագրությունը զրում են. «Ձեռքի տակ ստույգ տվյալներ չունենալու հետևանքով, կազմողները առանձին պատմական տեղեկանքներում ցույց չեն տալիս ֆոնդ առաջացնող հիմնարկի ստեղծման և լուծարքի ենթարկման տարեթիվը» (էջ 9)։

Մթե՞ հնարավոր չէր Հայկական ՍՍՌ ՆԳՄ արխիվային վարչության և արխիվի գիտաշխատողների միջոցով Թիֆլիսում պարզել կովկասյան փոխարքայի դրասենյակի (էջ 15) լուծարքվելու ստույգ տարեթիվն ու ամսաթիվը և չդրել 1846—1917 թթ.։ Այդ մասին կան նույնիսկ իր ժամանակի թերթերում պաշտոնական հաղորդագրություններ։ Նույնը կարելի է ասել նաև «Երևանի նահանգապետի գրասենյակ»-ի, «Երևանի նահանգական վարչություն»-ի, «Երևանի բնական հանձնաժողով»-ի, «Երևանի նահանգական քաղաքային գործերի ատյան»-ի և այլ շատ ֆոնդերի մասին։ Բավական չէ գրել լիկվիդացվել է 1896, 1917, 1918, 1919, 1920 թվականներին, այլ պետք է պարզել և գրել ճշգրիտ ամիս-ամսաթիվը, ինչպես այդ արված է «Երևանի նահանգապետի գյուղացիական գործերի ատյան»-ի նկատմամբ՝ վերացվել է 1918 թ. հունիսի 19-ին (էջ 23)։ Այդ հիմնարկները մի ինչ-որ օր են դադարել գործելուց, այլ ոչ թե ամբողջ տարվա ընթացքում։

ինքնալիկվիդացվել կամ աստիճանաբար հայվել։ Ցանկության դեպքում միանգամայն հնարավոր էր ստույգ տվյալներ ձեռք բերել և չբավականանալ միայն պահպանման առանձին միավորներում եղած տվյալներով, այլ կողմնակի աղբյուրներից պետք է լրացվեր ուղեցույցի հրատարակության ժամանակ։

Արխիվային ուղեցույցները հեշտ ու արագ չեն կազմվում ու հրատարակվում։ Այս հանգամանքը հաշվի առնելով, հրատարակչությունը չպետք է ձեռնարկի տիրաժը սահմաներ 500 օրինակ, այլ առնվազն 1500 օրինակ, քանի որ մեր ռեսպուբլիկայում միայն մի քանի հազար գիտնականներ կան։ Թուղթը որակով է, տպագրությունը մաքուր, բայց «նկատված վրիպակների»-ի դանկը մեծ է։

Չնայած այդ թերություններին, ուղեցույցը արխիվային նյութեր ուսումնասիրողների համար արժեքավոր ձեռնարկ է հանդիսանում։

Ա. Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ